Հարցում

11.11.2011 11:26

Հարց 1. *Ինչքա՞ն ժամանակ է միջինն անհրաժեշտ «հաճախորդի» դիմելու պահից (հաճախորդը պատրաստ է փաստաբանի ստանդարտ պայմաններով կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր, վճարել բոլոր անհրաժեշտ գումարները և պետական տուրքը և այլն), մինչև դատարան հայց ներկայացնելը (արտադատարանական որևէ քայլ ձեռնարկելու՝ բանակցություններ, հաշտություն և այլն անհրաժեշտություն չկա): Պատասխանը խնդրում եմ հիմնել փաստաբանի մոտ/գրասենյակում առկա իրական պրակտիկայի վրա:*

ա) միջինը մեկ շաբաթ

բ) միջինը երկու շաբաթ

գ) միջինը երեք շաբաթ

դ) այլ ժամկետ (խնդրում ենք նշել _____)

Հարց 2. *Ինչքա՞ն կկազմի փաստաբանի վճարը, որը պետք է վճարվի փաստաբանին մինչև դատական գործի ավարտը (որպես կանոն անվանվում է նաև չվերադարձվող գումար/ծառայության վճար): Այստեղ դրական արդյունքի դեպքում վճարման ենթակա գումարը խնդրում ենք չնշել, կամ նշել առանձին:*

ա) 100.000 ՀՀ դրամ

բ) 150.000 ՀՀ դրամ

գ) 200.000 ՀՀ դրամ

դ) 250.000 ՀՀ դրամ

ե) այլ գումար (խնդրում ենք նշել _____)

Հարց 3. *Փաստաբանների պրակտիկայում (2010-2011 թթ. ընթացքում), ինչքա՞ն է միջինը տվյալ գործերի քննությունը դատարանում՝ հայցը դատարան մուտք անելու պահից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից վճռի հրապարակում (ներառյալ՝ ապրանքագիտական կամ այլ համապատասխան փորձաքննության վրա ծախսվող ժամանակը):*

ա) միջինը 100 օր

բ) միջինը 120 օր

գ) միջինը 150 օր

դ) միջինը 200 օր

ե) այլ ժամանակ (խնդրում ենք նշել _____)

Հարգելի գործընկերներ,

Վերոնշյալ հարցմանը օբյեկտիվ և հիմնավորված պատասխան տալու համար խնդրում ենք **մինչև սույն թվականի նոյեմբերի 13-ը** info@advocates.am և irina@lawgroup.am էլեկտրոնային հասցեին ուղարկել Ձեր պատասխանները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })